Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Մուրացանի երազանքը, և ինչի իրականացմանն է ծառայել նա իր ամբողջ ստեղծագործական ներուժով:

Մերի Հայրապետյան
«Մեսրոպ Մաշտոց» համալսարան

Գեղարվեստը՝ ցավի բովանդակիչ

Յուրաքանչյուր դարաշրջանի գրական-պատմական պրոցես առանձնանում է յուրահատուկ ձևաբովանդակային բնութագրականներով: Այսինքն՝ այն նախորդ և հաջորդ գրական ընթացքից տարբերվում է թեմատիկ-գաղափարական, ձևակառուցվածքային, ժանրային, լեզվաարտահայտչական և այլ հատկանիշներով: Գրական պրոցեսի նման զարգացումը օրինաչափ և անհրաժեշտ երևույթ է, այն որքան անսովոր, նույնքան էլ բնական է, քանի որ բոլոր դեպքերում գրականությունը իրականության գեղարվեստական վերարտադրությունն է, արտապատկերումը, իսկ վերջինս ժամանակի հետ փոխվում է, փոխվում են նաև նրա ընկալման և յուրացման ձևերը՝ պայմանավորված վերարտադրողի աշխարհընկալմամբ, իմացական ու մտածողական մակարդակով: Ասվածը մի կողմից, մյուս կողմից՝ յուրաքանչյուր գեղարվեստական դրսևորում կնքվում է իր ժողովրդի պատմությամբ ու ճակատագրով: Այս հանգամանքով պայմանավորված, մեր խնդրո առարկան՝ ընդհանրացված ձևով վերցրած գրականության պատմությունը, բովանդակում է ազգային մտածողության արծարծումները՝ գեղարվեստական խնդրի իրագործման ճանապարհին որպես նյութ ծառայեցնելով այն ամենը, ինչը բացատրվում է ժողովրդի հոգեբանություն, ազգային ոգի, էություն հասկացություններով: Գաղափարական այս տեսակետը հիմնավորվում, ապացուցվում է այն գլխավոր արյունատար երակի առկայությամբ, որը գոյավորվում է ազգային ակունքներից, որով սնուցվում է ժողովրդի ոգին և որն էլ բոլոր ժամանակների գաղափարակիրն է: Այսպես, յուրաքանչյուր գրականություն նախ ելակետվում է ժողովրդական, ազգային աղբյուրներից:

Այս ամենի հավաստացումն ամրապնդվում է թեկուզ այն փաստով, որ վերքուցավոտ է հայ գրականության պատմությունը, ողբով ու վերքով է հունցված հայ գեղարվեստական միտքը: Որովհետև այդպիսինն է ժողովրդի ճակատագիրը, այդպիսինն է ժողովրդի պատմությունը: Խնդրո առարկայի քննության համար վերցնենք Հովի. Մելքոնյանի «Հիշողության դաշտ» գիրքը:

«Իմ ժողովուրդը մեծ ու բաց վերք ունի՝ հասցված 1915թ.: Հետեւապես, այդ մեծ ու բաց վերքը կրող ժողովրդի գրականությունը, ուզես, թե չուզես, գեղագիտական առումով դուրեկան լինի, թե չլինի, պետք է այդ վերքի, մրմռացող ցավի, վրեժի ու հատուցման գեղարվեստական վավերացումներն իր մեջ ունենա՝ որպես ժողովրդի պատմության ու ճակատագրի հիմնական, առանցքային խնդիր: Թերեւս՝ ամենահիմնականը: Իմ ժողովուրդը վիրավորվածի պատմություն ու վիրավորված պատմություն ունի, եւ նրա գրականությունը չի կարող անտեսել այս հանգամանքը՝ հանուն եւ ի խնդիր մաքուր ու զտված գեղարվեստի»,- գրում 60-ական թվականների արձակ խոսքի վարպետ Հովի.Մելքոնյանը:

Ժողովրդի պատմություն եւ ճակատագիր. ահա այն բարձրագույն արժեքները, որտեղից ակունքվում եւ որոնց ողբերգական անդրադարձով ծավալվում են երկի գործողությունները: Նույն արժեքները հեղինակի համար մի կողմից ծառայել են որպես երկի գաղափարային առանցք, մյուս կողմից՝ պարտավորեցնող պայման: «Գրողի բուն խնդիրը, գրողի բուն բանուգործը իր մայր ժողովրդի պատմությունն ու ճակատագիրն է, որը չափվում է ոչ թե քառակուսիներով, որպես մակերես, այլ խորանարդներով, որպես ծավալ՝ խորք, խորություն»,- գրողի կոչման մասին նկատում է Հովի. Մելքոնյանը:

Մի առիթով Հր. Մաթեւոսյանը այն միտքն է շոշափել, որ գեղարվեստը չպիտի բովանդակի ազգային ողբերգությունը, նկատի ունենալով հայոց Մեծ եղեռնի թեման, որ այդ թեմայի վրա «արվեստ խաղալ» չի կարող: Մեր ընկալմամբ, ասել է թե՝ գեղարվեստը, որպես ցավի արտահայտության միջոց, ամբողջության մեջ չի կարող ընդգրկել նրա ողբերգականության տարողությունը, հետեւապես խաթարում է ցավի էության բնականությունը, երեւույթը գրկում անմիջականությունից:

Գրականագետ Սարգիս Փանոսյանը «Հիշողության դաշտ » գրքի մասին իր խոսքում հաշվի առնելով Հր. Մաթեւոսյանի տեսակետը, նկատում է. «Ժանրը, որ ընտրել է Հովի. Մելքոնյանը. նաեւ կոչված է նվազագույնի հասցնելու նման կորուստը»:

Վկայակոչելով մեծ արձակագրի նույն միտքը՝ անվանի գրականագետ Կ. Աղաբեկյանը գտնում է, որ այդ խնդրում հոգեբանական մի նրբություն կա. գրողը մարդկային բռնակալություն-

ների մասին խոսելիս անհարմար է զգում մարդկային ցեղին պատկանելու համար եւ խուսափում այդ թեմաներից:

Իր հարցազրույցներից մեկում էլ, չհակաճառելով մեծ արձակագրին եւ նրա տեսակետն ընդունելով որպես անհատհեղինակի սուբյեկտիվ կարծիք, մոտեցում, այլ ոչ թե ընդհանրացնող տեսություն, Հ. Մելքոնյանը նշում է. «Հր. Մաթեւոսյանն իր պապերի ու ահնիձորցիների հոգսերն ու ցավերն է իր սրտին ու գրչին առնում, որոնք ներծծված են ադի քրտնիքով, ես՝ իմ պապերի ու մշեցիների հոգսերն ու ցավերը, որոնք թաթախված են ադի արյունով»:

Իսկական գրողը, մելքոնյանական մոտեցմամբ, ծնվում է ժողովրդի հիշողությունից եւ իր մեջ կրում նախնիների գեներազդակները:

Ցավին չտրվելու համար վերքից հեռանալ է պետք: Իսկ 1915թ. վերքից հեռացում չկա, քանի դեռ ...: Քանի դեռ այն չի բուժվել: Քանի դեռ եղեռնագործության հանդեպ սառն ու անտարբեր է քաղաքակիրթ աշխարհը, քանի դեռ եղեռնագործները փորձում են մոռացության ցեխով պատել, խեղաթյուրել փաստերը, շրջել իրականությունը: Սակայն ժամանակի փոշին աղ դարձած ծալեծալ բացում է չսպիացած վերքը, ցավն ահագնանում է, նոր լիցք է ստանում վրեժխնդրության կիրքը, դատաստանի օրը տեսնելու սպասումը լցվում է անհամբերությամբ: Ասվածի գեղարվեստական վկայություն «Հիշողության դաշտ»-ը մի զսպանակված ցավ է: Ցավ կա ամեն մի տողում, ցավ կա ամենուր: Այն մեկ հանդես է գալիս որպես երկի գաղափարական առանցք, աստիճանաբար դառնում գործողությունների զարգացման ելակետ, ապա՝ ստանձնում գործող հերոսի դեր: Շարադրանքը ծայր է առնում ցավից և ընթանում ցավով: Նույն ցավը ավելի զորեղ է, երբ հանդես է գալիս ժողովրդի ճակատագրի բարդույթներում: Այն կտրում-անցնում է տարածաժամանակային սահմանները, խոսքը դարձնում տարերային: Չկա պատմության այս ու այն օր, այստեղ ու այնտեղ չկան, կա ժողովրդի ճակատագիր, կա հոգեղեն քարտեզով միասնական հայրենիք, որովհետև այդ բոլորը հիշողության միևնույն դաշտի մեջ են:

Բառերը կարծես հունցված լինեն ցավախմորով: Բնական է խոսքի նման դրսևորումը, որովհետև պատմողը «վիրավոր արյամբ» ժառանգել է քառասուն սպիով պատված մշեցի պապից կորսված երկիրը՝ Սուշը, որը չի տեսել, բայց տեսնում է պապի կնճռոտ ճակատի ծալքերում, գծագրվում է պապի համբերությամբ ծանրացած ախ ու հառաչից:

Առաջին հայացքից զսպված, ապա կուտակումից ահագնացող ցավ է ամբարված 363 ականատես վկաների ցուցմունքնամակներում, որոնք ժամանակին տեղ չեն հասել, բայց, հեղինակի համոզմամբ, կարող են առաքվել ցանկացած հասցեով և գտնել իրենց իսկական հասցեատերը: Քանի որ դրանք բողոքի հայցեր են՝ ուղղված քաղաքակիրթ հանրությանը՝ արդար դատաստանի օրը տեսնելու սպասումով և հույսով լի: Կգա օրը, այլապես քանի դար էլ անցնի մորթվող մանուկների ճիչեր են լսվելու, կացնակիր ու յաթաղանակիր ոճրագործների գազանաբարո աղմուկ-մռունչ-աղաղակն է մարդկանց ականջը պատռելու, արյան հոտ է գալու:

Արեն Մակյան
«Արքունության կրակ» ԵԿ

Ինտեգրում վաղեմի քրիստոնեական արժեքների ու սկզբունքների մեջ

Անցյալ աթեիզմի, կռապաշտ և սնոտիապաշտ տարիները խոր հետք են թողել մեր հասարակության, ներկայիս սերնդի գիտակցության և աշխարհայացքի ձևավորման վրա՝ արմատախիլ անելով կարևոր հոգևոր արժեքներ: Այսօր շատերի համար, մանավանդ երիտասարդների շրջանում, հավատքը, աղոթքը, Աստծո խոսքը, աստվածապաշտ կյանքը համարվում են հետամնաց և պառավական:

Մենք ապրում ենք քրիստոնեական երկրում, դարեր շարունակ մեր ազգը կոչվել է «քրիստոնյա», բայց եթե անկեղծ լինենք, այսօր այդ անվանումը լոկ պիտակ է մեր ազգի վրա, քանի որ ոտնահարված են Աստծո խոսքը, քրիստոնեական արժեքները և հավատքի հիմնասյուները:

Այսօր հաճախ ես հանդիպում մարդկանց, ովքեր ասում են՝ «...հավատում ենք, ինչպե՞ս չենք հավատում, ճիշտ է՝ Աստվածաշունչ չենք կարդում... ժամանակ չունենք կամ էլ չենք հասկանում, բայց հավատում ենք», թե ո՞ւմ են հավատում կամ թե ինչի՞ն Աստված գիտի: Իսկ ոմանց կարծիքով մեր ազգի դժվարությունների պատճառը քրիստոնեությունն ընդունելն էր. ասել է, թե ավելի լավ կլիներ, որ մենք հեթանոս մնայինք, ոմանք էլ նույնիսկ հանդգնում են ենթադրել, իբր

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ